ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 02-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար գրասենյակային գույքի, փաստաթղթերի ոչնչացման սարքերի և հեռախոսային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 30.06.2025թ. և 01.07.2025թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 02.07.2025թ. տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում 1</u>

«6-րդ չափաբաժնի Panasonic KX-TS2350 մոդելի նոր տարբերակը՝ Panasonic KX-TS500MX մոդելն է: Ընդունելի է արդյոք Ձեր կողմից:Շնորհակալություն:»

<u>Պարզաբանում 1</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով՝ 6-րդ չափաբաժնով նախատեսված ապրանքի մասով հստակ սահմանված են Դատական դեպարտամենտի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ հեռախոսների մոդելները, ուստի հիշյալ չափաբաժնի մասով հայտով առաջարկվող ապրանքի մոդելները պետք է համապատասխանեն վերոնշյալ տեխնիկական բնութագրում նշված մոդելներին:»

<u>Հարցադրում 2</u>

«Հարգելի պատվիրատու, խնդրում ենք տրամադրել 1 և 3 կետերի նկարները՝ ավելի կոնկրետ պատկերացում կազմելու համար: Նախապես շնորհակալություն:»

<u>Պարզաբանում 2</u>

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների նկարագրերը, այդ թվում ապրանքների արտաքին տեսքին ներկայացվող պահանջները սահմանված են նշված ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով, ուստի հիշյալ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն վերոնշյալ տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Գայանե Դադիվանյանին:

Հեռախոս՝ 010 511-783:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/12» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: